

սակի յարարերութիւններ մշակել, որոնց միջոցով հայերը քաղաքական պաշտպանութեան տակ առնուին: Մենք արդէն շատ դէպքերում տեսանք, որ Հոռմը չէր կարող ուրիշ հողի վրայ հովանաւորութեան դաղափար ընդունել, բայց միայն կատարեալ հրպատակութեան հողի վրայ... Հայ լուսաւորչական կրօնաւորները... ձգտում են ժխտել եւ մերձեցման այնպիսի փաստեր, որոնք միանգամայն ճիշդ են» (17):

Յակոբ Կաթողիկոսին մարմինը մեծաշուք արարողութեամբ կը թաղուի Օգոստոս 2ին, Բանկալթիի կամ Պեյոլլուի դերեզմանատունը, ինչպէս վերեւ ըսինք: Վերջերս անոր աճիւնները փոխադրուեցան Բերայի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյն բակը, ուր կարելի է տեսնել իր հնամենի երկաթապատ մարմարինէ շիրիմը երեք աստիճանով բարձրացած, որուն վրայ քանդակուած են թաղ, եմիփերոն, կաթողիկոսական գաւազան, կոնքեռ եւ շքանշաններ. մէջտեղը փորագրուած է՝ հազար հարիւր քսան եւ ինն, Օգոստոս: Շիրմին աջ ու ձախ երեսին վրայ կը կարդացուի հետեւեալ արձանագրութիւնը.

Աջ երեսին վրայ

«Հանգստարանս այս հրաշափառ և պատուելի վայելչադիր յօրինուածովք ի հանդիսի

(17) Լեռ, Անդ 347-348: